

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Տըւիր ինծի ցաւ մը անհուն,
Փոխակերպեմ երգի որ զայն
Եւ կըսակեմ երգը Մարդուն:

Հիմա կը զգամ ցաւը ծաղկած
Հիւսեմ տող մ'երբ ամէն անգամ,
Ըլլա՛ւ ընդմիջս միսքս անկասկած

Թէ չէ անցած ցաւն ապարդիւն,
Պիտի հասնի թէ անվարան
Երգըս մինչեւ սիրքը Մարդուն:

Դիտեմ արդէն — Օ՛ Սըրբութիւն —
Թէ այրուելով կըրճանմ մենք միայն
Տալ էիք մը լոյս եւ ջերմութիւն:

•

Վ Ե Ց Ե Ա Կ

Քանի՛ դարեր են դարձեր,
Քանի՛ հազարամ,
Հուրէ — ջուրէ եմ անցեր,
Լըսեր Քու պատգամ,
Քեզ՝ հե՛ս «Գագաթ» բարձրացեր
ԽԱՉՈՒԱԾ ԲԱՐԵԿԱՄ:

•

Ք Ա Ռ Ե Ա Կ

(ԱՇՈՒՂԱԿԱՆ)

Թէ զերդ անբան եկած անցած
Այս հըրաւքին չես հիացած,
Չես օրօրած երազ ու Սէր...
Թէ չգայիր ի՛նչ կը պակսեր:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

